

† † † HOKEHANKISD † † †

**BEDROS DOUDAKLIAN** (30<sup>th</sup> Anniversary)  
**BAHIA LUCINE FESTEKGIAN**  
Requested by: Der Hayr and Board of Trustees  
Doudaklian Families  
Dudek Family

**HAROUTIOUN BOYADJAIN, SAHAG BOYADJIAN,  
AGHAVNI BOYADJIAN, TANIEL BOYADJIAN,  
APRAHAM BOYADJIAN, GUIRAGOS BOYADJIAN,  
GARABED YEGHYAIAN, VARTOUHI YEGHYAIAN,  
YERVANT YEGHYAIAN, BEDROS KAHAYAN,  
MARCRIK KAHAYAN, ASSADOUR KAHAYAN,  
JANET KAHAYAN, OSSANA KAHAYAN, DIRAN  
KAPSHANIAN,  
VARTOUHI KAPSHANIAN, ANI BOYADJIAN,  
KRIKOR NAKASHIAN, JOSEPH BABE, MARY BABE,  
YACOUB BABE, LORIS BABE**  
Requested by: Der Hayr and Board of Trustees  
Jano & Sona Kahayan and Family

**ASDGHIG (DEMIRJIAN) SARAFIAN** (1<sup>st</sup> Anniversary)  
**DR. VAHE ANTRANIG SARAFIAN** (33<sup>rd</sup> Anniversary)  
Requested by: Der Hayr and Board of Trustees  
Salpi Sarafian  
Colonel Aram & Lorig (Armenian) Sarafian and family  
Armen & Nancy Sarafian and family  
Alex & Talar Sarafian and family




**CHURCH ATTENDANCE PROCEDURE:**

- You MUST call and RESERVE your seat by the Saturday BEFORE Sunday's service.
- You MUST wear a MASK when you are on church property at ALL times.
- Upon entrance into the church foyer you MUST sign in and follow COVID-19 protocols.

**Ս. ԽԱՉ ՀԱՅՑ. ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻ**  
**SOORP KHATCH ARMENIAN  
APOSTOLIC CHURCH**

☞ **SUNDAY, FEBRUARY 7, 2021** ☛



**ՉԱՅՆ ԳԿ**

**Ս. ԾՆՈՒՆԴԷՆ ԵՏՔ Դ. ԿԻՐԱԿԻ**  
**FOURTH SUNDAY AFTER NATIVITY**

**This Sunday's service will be open to the public, with limited seating, according to COVID-19 guidelines.**

**Ս. Պատարագ Առ. Ժամը 10:30-ին հեռարձակում**  
**Divine Liturgy 10:30 A.M. Live Streamed**

Soorp Khatch Armenian Apostolic Church  
4906 Flint Drive, Bethesda, MD 20816  
Office Hours: 10:00 a.m.-2:00 p.m.  
Phone: (301) 229-8742; Fax: (301) 229-9393  
E-mail: [soorpkhatch@verizon.net](mailto:soorpkhatch@verizon.net)  
Website: [www.soorpkhatch.org](http://www.soorpkhatch.org)  
Rev. Fr. Sarkis Aktavoukian, Pastor  
Home Phone: (301) 977-1863; Cell: (301) 787-5506

**DER VOGHORMIA**

*All Sick*



*Parishioners*

**ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ  
ՏԻՏՈՍԻ ԳՐԱԾ ՆԱՄԱԿԷՆ**

----- (1. 4 - 11) -----

Ո՛վ Տիտոս, մեր հասարակաց հաւատքի ճամբով իմ հարազատ որդիս, թող Հայրն Աստուած եւ մեր փրկիչը Քրիստոս Յիսուս շնորհք եւ խաղաղութիւն պարգեւեն քեզի:

Քեզ կրեա՛նք թողուցի, որպէսզի եկեղեցիին պէտքերը հոգաս եւ զայն կազմակերպես՝ իւրաքանչիւր քաղաքի մէջ երէցներ կարգելով, ինչպէս որ քեզի պատուիրեցի: Երկրորդեան թեկնածուն պէտք է անմեղադրելի ըլլայ, մէկ կնոջ այր ըլլայ եւ հաւատացեալ զաւակներ ունենայ, որոնք անառակութեամբ եւ անհնազանդութեամբ ամբաստանուած չըլլան: Արդարեւ, եպիսկոպոսը՝ որպէս Աստուծոյ տնտես՝ պէտք է անմեղադրելի ըլլայ: Պէտք չէ յանդուգն, բարկացող, գինեմոլ, կռուազան կամ շահամոլ ըլլայ, այլ՝ հիւրասէր, բարին սիրող, զուսպ, արդար, մաքուր եւ ժուժկալ: Պէտք է ամբօրէն պահէ իր սորված վստահելի վարդապետութիւնը, որպէսզի կարենայ ուղիղ ուսուցումով յորդորել ուրիշները եւ յանդիմանել հակառակորդները:

Որովհետեւ բազմաթիւ անհնազանդներ, դատարկախօսներ եւ միտք պղտորողներ կան, մանաւանդ հրէութենէ դարձածներուն մէջ, որոնց բերանը պէտք է փակել, որովհետեւ անոնք ամբողջ տուններ կը քանդեն, շահամոլութենէ տարուած ուսուցանելով բաներ, որ պէտք չէ ուսուցանել:

**ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԻԵՏԱՐԱՆԷՆ**

**ԸՍՏ ՅՈՎՀԱՆՆԷՍԻ**

----- (7. 37 - 44) -----



Տօնին վերջին եւ հանդիսաւոր օրը, Յիսուս ոտքի կանգնած՝ բարձրաձայն կ'ըսէր. «Ո՛վ որ ծարաւ է՝ թող ինծի գայ եւ խմէ: Ո՛վ որ ինծի կը հաւատայ, ինչպէս Սուրբ գիրքը կ'ըսէ, “Անոր սիրտէն կ'ընսաստուջութիւն գնանք պիտի քղիսին”»:

Յիսուս ասիկա կ'ըսէր Հոգիին համար, որ իրեն հաւատացողները պիտի ընդունէին. իսկ Հոգին տակաւին չէր տրուած, քանի Յիսուս փառաւորուած չէր:

Ժողովուրդէն ոմանք երբ լսեցին այս խօսքերը, ըսին. «Ասիկա է ճշմարիտ մարգարէն»: Ուրիշներ կ'ըսէին. «Քրիստոսն է»: Իսկ ոմանք ալ կ'ըսէին. «Միթէ Գալիլիայէ՞ն պիտի գայ Քրիստոսը: Սուրբ

գիրքը չ'ըսեր՝ թէ Քրիստոս Դաւիթ թագաւորի սերունդէն պիտի ըլլայ եւ Դաւիթի քաղաքին՝ Բեթլեհէմի մէջ պիտի ծննայ»:

Եւ Յիսուսի պատճառով տարակարծութիւններ յառաջ եկան ժողովուրդին մէջ: Ոմանք ուզեցին ձերբակալել զինք, բայց ոչ ոք համարձակեցաւ ձեռք զարնել:

 **SCRIPTURE READINGS**   
TITUS 1:4-11

To Titus, my true son in our common faith: Grace and peace from God the Father and Christ Jesus our Savior.

The reason I left you in Crete was that you might straighten out what was left unfinished and appoint elders in every town, as I directed you. An elder must be blameless, the husband of but one wife, a man whose children believe and are not open to the charge of being wild and disobedient. Since an overseer is entrusted with God's work, he must be blameless--not overbearing, not quick-tempered, not given to drunkenness, not violent, not pursuing dishonest gain. Rather he must be hospitable, one who loves what is good, who is self-controlled, upright, holy and disciplined. He must hold firmly to the trustworthy message as it has been taught, so that he can encourage others by sound doctrine and refute those who oppose it.

For there are many rebellious people, mere talkers and deceivers, especially those of the circumcision group. They must be silenced, because they are ruining whole households by teaching things they ought not to teach--and that for the sake of dishonest gain.

JOHN 7:37-44

On the last and greatest day of the Feast, Jesus stood and said in a loud voice, "If anyone is thirsty, let him come to me and drink. Whoever believes in me, as the Scripture has said, streams of living water will flow from within him." By this he meant the Spirit, whom those who believed in him were later to receive. Up to that time the Spirit had not been given, since Jesus had not yet been glorified.

On hearing his words, some of the people said, "Surely this man is the Prophet." Others said, "He is the Christ." Still others asked, "How can the Christ come from Galilee? Does not the Scripture say that the Christ will come from David's family and from Bethlehem, the town where David lived?" Thus the people were divided because of Jesus. Some wanted to seize him, but no one laid a hand on him.

**ԱՂՕԹՔ ԲԺՇԿՈՒԹԵԱՆ**

Փարատէ՛ց ցաւերն ու բժշկէ՛ ժողովուրդիդ հիւանդութիւնները Տէր Աստուած մեր, եւ քու ամենայաղթ խաչիդ նշանով կատարեալ առողջութիւն շնորհէ՛ բոլորին. որով, քու խաչովդ մարդոց տկարութիւնը վերցուցիր, եւ մեր կեանքի ու փրկութեան թշնամին դատապարտեցիր:

Դու՛ն ես մեր կեանքն ու փրկութիւնը բարերար եւ բազումողորմ Աստուած. միայն դու՛ն կրնաս մեր մեղքերուն թողութիւն շնորհել, եւ ախտերն ու հիւանդութիւնները հեռացնել, որովհետեւ միայն Քեզի յայտնի են մեր կարիքները:

Ո՛վ բարիքներ պարգեւող, քու առատ ողորմութիւնդ պարգեւէ՛ արարածներուդ, իւրաքանչիւրին իր կարիքին համեմատ. որպէսզի միշտ փառաւորուելով գովաբանուի ամենասուրբ Երրորդութիւնդ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից: Ամէն:

**A Prayer for the Healing of the Sick**

**Lord our God, take away the pain and heal the sickness of your people. Grant them all complete health by the sign of your all-triumphant cross, by which you took away the frailty of the human race and condemned the adversary for our life and salvation. You are our life and salvation, O good and merciful God. You alone are able to forgive sins and to drive pain and sickness out of us, and you know how to cure our afflictions. O Giver of good gifts, give your creatures the gift of your abundant mercy, each according to their needs. Let us always glorify and praise the all-holy Trinity, now and always and unto the ages of ages. Amen.**



*2020 & 2021 Membership Dues* – Parishioners who have not paid their 2020 Annual Membership dues are encouraged to remit payment. 2021 Membership Dues are also acceptable now. The membership fees are \$150.00 for adults and \$50.00 for each full time student, ages 18-26. These dues are 100 percent tax deductible



**Ա Ղ Օ Թ Ք**

Պահպանիչ եւ յոյս բոլոր հաւատացեալներուն՝ Քրիստոս Աստուած մեր, Հայաստանեայց առաքելական Սուրբ Եկեղեցին անսասան պահէ, եւ հաւատացեալներուն մէջ աստուածգիտութեանդ յոյսն ու սէրը բորբոքէ: Հայաստանի եւ Արցախի հանրապետութիւններն ու Հայոց բանակը ամրացուր, եւ Հայ ազգի միասնականութիւնը անխախտ պահէ: Օրինէ՛ համայն հաւատացեալ ժողովուրդը քու սուրբ Խաչիդ ամենակարող զօրութեամբը: Փրկէ, ազատէ, երեւելի եւ աներեւոյթ ամէն տեսակ թշնամիներէ ու փորձութիւններէ, եւ մանաւանդ պսակածեւ ժահրի սպառնալիքէն: Նահատակներու հոգիները երկնքի արքայութեանդ արժանացուր եւ անոնց պարագաները Քու Սուրբ Հոգիովդ մխիթարէ: Գերիները իրենց կապանքներէն ազատէ, եւ գաղթականներուն տուն դարձը ապահովէ: Մարմնով, մտքով, սրտով ու հոգիով վիրաւորեալներուն բժշկութիւն պարգեւէ եւ արժանի ըրէ մեզ՝ գոհութեամբ փառաւորելու Ամենասուրբ Երրորդութիւնդ: Այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

**A PRAYR**

May God, the preserver and hope of all believers, keep the covenant of the unity of the Armenian people inviolable, keep the Armenian Apostolic Holy Church unshakable and inflame theology and love in the believers, strengthen the nations of Armenia and Artsakh and the Armenian army. Under the umbrella of your cross. Save, deliver, from all visible and invisible enemies and temptations. Make the souls of the martyrs worthy of the kingdom of heaven and comfort them with Your Holy Spirit. Calm the hearts of the relatives of the missing, make the captives safe, ensure the return of the refugees, and heal the wounded physically, mentally, emotionally and spiritually. Make us worthy to glorify the Most Holy Trinity with gratitude. Now and always and forever and ever. Amen:

*The Altar curtains will be closed starting Sunday, February 14, Poon Paregentan (Great Lent) until Palm Sunday. No Altar flowers are needed during Lent.*